Հ.Հ. Ա.Ժ. պատգամավոր Ա.Աղաբաբյանից

Հետք պարբերականի լրագրող Սեդա Ղուկասյանին:

Համաձայն Ձեր վերը առաջադրած հարցրի՝ հայտնում եմ,որ ԱԺ վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում քաղաքացիների հետ ընդունելություն,որպես այդպիսին, կազմակերպվում է ամեն օր՝ անկախ ժամից և հանդիպման վայրից:Պարտադիր չեմ համարել և հիմնականում հնարավոր էլ չէ ամեն հանդիպում ու պահանջի ներկայացում արձանագրել ու ֆիքսել, մանավանդ որ ինձ էլ չի հետաքրքրել ու շահագրգիռ էլ չեմ եղել առանձին դրանք գրանցելու կամ արխիվացնելու:Ինձ ավելի շատ հետաքրքիր է տվյալ պահին մեր քաղաքացիների խնդիրների օպերատիվ արձագանքելն ու դրանց հրատապ լուծումներ գտնելը: Քաղաքացիների խնդիրները հիմնականում վերաբերել է սոցիալական, գյուղատնտեսության, կրթական և իրավական ոլորտների: Հրատապ են եղել տարերային և մի շարք աղետների արձագանքելը: Այս ոլորտներին վերաբերող հարյուրավոր դիմումներ եմ ստացել խնդրանքների կամ պահանջների տեսքով ու աշխատել եմ, հնարավորության սահմաններում, հիմնական լուծումներ տալ: Հանդիպումների ժամանակ էլ,հիմա ու երբեք չեմ ցանկացել խնդիրները տարբերակել միմյանցից, քանզի բոլորն էլ համարել եմ կարևոր և աշխատել եմ լուծումներ գտնել, օգնել մեր քաղաքացուն: